Հետազոտությունների և բարձրագույն կրթության գնահատման
բարձրագույն խորհուրդ

Հավատարմագրման վերջնական զեկույց

ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՃՇՀԱՀ

Վկայական թիվ AIA 0109/2015

Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի հավատարմագրումը (այսուհետ՝ ՃՇՀԱՀ) բարեհաջող ավարտին է հասցվել Հավատարմագրման Հանձնաժողովի կողմից, որը ամբողջությամբ հաշվի է առել տեղում կատարած այցելությունից հետո փորձագետների ներկայացրած արտաքին գնահատման զեկույցը, ինչպես նաև Հաստատությանը վերաբերող այլ հասանելի տեղեկատվություններ:

Այս հավատարմագրման Հանձնաժողովը, կոլեգիալ ձևով, ըստ այդ գործընթացի շրջանակներում մշակված չափանիշների, ՃՇՀԱՀ-ի վերաբերյալ ներկայացրել է մի գնահատում, և այժմ ներկայացնում է հավատարմագրման այս վերջնական զեկույցը:

ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄ

ՉԱՓԱՆԻՇ 1. Կառավարում. առաքելություն և ռազմավարություն

Հղում.

Հաստատության առաքելությունները հստակորեն սահմանված են և հաշվի է առնված այն համատեքստը, որում վերջինս գործում է: Հաստատությունն ունի իր առաքելություններին համապատասխան բացահայտ աշխարհայացք, ռազմավարություն ու նպատակներ: Հաստատությունն ապահովում է իր ռազմավարության իրականացումը, վերահսկում և կիսում է այն բոլոր շահագրգիռ կողմերի հետ: Հաստատության ներքին գործավարությունը հարմարեցված է և արդյունավետ կառավարման հնարավորություն է տալիս:

Չափանիշի գնահատում

ՃՇՀԱՀ-ն ունի հստակորեն սահմանված առաքելություններ, ինչպես նաև դրանց համապատասխան ռազմավարական ծրագիր, որն արտացոլում է այդպիսին լինելու իր ցանկությունը ոչ միայն Հայաստանում, այլև միջազգային մակարդակով:

Վերջերս, Համալսարանի կատարված կարգավիճակի փոփոխությունը, նրան տալիս է ավելի շատ ինքնավարություն, որն էլ հնարավորություն է տալիս հետևողականորեն իրականացնել իր ռազմավարական նպատակները:

Իր կարգավիճակի փոփոխությունից բացի, ՃՇՀԱՀ-ն ուժեղ կամք է դրսևորում համալսարանի կառուցվածքային բարելավման համար: Այսպիսով, ՃՇՀԱՀ-ը վերանայել է իր ներքին գործավարությունը՝ պարզեցնելով կառուցվածքային սխեման, ստեղծելով առանցքային պաշտոններ, ինչպես օրինակ՝ գործադիր կառավարման լիազորություններով պրոռեկտորի պաշտոնը: Այդ պրոռեկտորը՝ լինելով արդեն ռեկտորի առաջին տեղակալ, հարց է ծագում, արդյոք ցանկալի է նրան ավելի բարձր դասել մյուս պրոռեկտորներից: Հանձնաժողովն ավելի նպատակահարմար է գտնում, որ բոլոր պրոռեկտորները, առանց բացառության, դասվեն հիերարխիայի միևնույն մակարդակին:

ՃՇՀԱՀ-ն բարձրագույն կրթության Եվրոպական տարածքի լիարժեք մաս դառնալու և միջազգային հարթակում ավելի տեսանելի լինելու ցանկություն է հայտնում: Այդ ցանկությունը գովելի է:
Մինչդեռ, այդ նպատակին հասնելու համար, հայկական համալսարանների համար և դրանց կողմից պետք է մշակվի եվրոպական համալսարանների կառավարման մոդելին նման մոդել: ՃՇՀԱՀ-ն, որպես միջազգային կապերը ողջունող համալսարան, կոչված է նախաձեռնել այդ փոփոխման գործընթացը: Վերջինս ՃՇՀԱՀ-ին կշնորհի ինքնավարության ավելի բարձր աստիճան՝ պահպանելով կապերը պետության հետ: Այսպիսով ՃՇՀԱՀ-ի կառավարումն ընդհանուր առմամբ ավելի համահունչ կլինի Եվրոպայի համալսարանների՝ պետությունից ավելի անջատ կառավարման մոդելներին:

Եվ վերջապես պետք է նշել, որ բոլոր շահագրգիռ կողմերը (դասախոսներ, վարչական աշխատողներ, ուսանողներ, արտաքին շահառուներ) ներգրավված են համալսարանական կյանքի տարբեր մակարդակներում, ինչպես նաև ՃՇՀԱՀ-ի ռազմավարության որոշման գործում: Ուշագրավ է այն փաստը, որ ուսանողները ներկա են որոշումներ ընդունող բոլոր իրավասու մարմիններում:

ՉԱՓԱՆԻՇ 2. Կրթություն ու հետազոտություն

Հղում.

Իր առաքելություններին և ռազմավարությանը համահունչ՝ հաստատությունը վարում է հետազոտական քաղաքականություն և կրթական քաղաքականություն, որոնք միմյանց հետ կապված են, կիսվում են հաստատության ներսում, և որոնց արդյունավետ կիրառումն ապահովված է: Հատատությունը երաշխավորում է ուսուցման մեթոդաբանությունը և վերլուծում դրանցից բխող արդյունքները: Հաստատությունը վարում է արժևորման, գիտական մշակույթի և նյութերի տարածման քաղաքականություն:

Չափանիշի գնահատումը

ՃՇՀԱՀ-ի առաջարկած կրթությունը համապատասխանում է հաստատության նպատակներին, դասավանդման մեթոդները լավ համապատասխանեցված են, և գործում է ծրագրերի շարունակական բարելավման համակարգ:

Այնուամենայնիվ, Հանձնաժողովը քաջալերում է ՃՇՀԱՀ-ին՝2016թ.-ին մեկնարկող ուսումնական ծրագրերը թարմացնելու ընթացքում, և ազգային բարեփոխման համաձայն առանձնահատուկ ուշադրություն դարձնեն բակալավրիատի, մագիստրատուրայի և ասպիրանտուրայի ուսանողների կողմից ձեռք բերված հմտությունների սահմանմանը և ուսումնական արդյունքներին: Հաստատությունը պետք է ավելի ընթեռնելի դարձնի ուսուցման ապահովման իր մեխանիզմը՝ ներառելով դասավանդվող առարկայի բովանդակության սահմանման գործընթացը: Հանձնաժողովը ցանկալի է համարում, որ համալսարանի կողմից ստեղծվի յուրաքանչյուր կրթական ծրագիրը վերահսկող արտաքին գնահատման Հանձնաժողով:

Հանձնաժողովը բարձր է գնահատել համալսարանին կից գործող ավագ դպրոցի և քոլեջի կարևոր դերը լավ ուսանողների հավաքագրման և ուսուցման գործընթացի համար:

Հանձնաժողովը ՃՇՀԱՀ-ի տնօրինությանը խորհուրդ է տալիս ձեռք բերել միջոցներ (մարդկային և տեխնիկական), որոնք հնարավորություն կտան ավելի լավ գնահատել յուրաքանչյուր կրթական ծրագրի ֆինանսական կարիքները: Դա թույլ կտա օպտիմալացնել ամբիոններին հատկացվող բյուջեները, և ոչ թե պարզապես հաստատել վերջիններիս պահանջները:

ՃՇՀԱՀ-ն սահմանել է իր հետազոտական քաղաքականությունը և այն ներառել է իր ռազմավարական ծրագրում: Այդ քաղաքականությունը հիմնվում է որակավորված աշխատակազմի և բավարար միջոցների վրա, որոնք էլ հնարավորություն են ընձեռում իրականացնել այն: Այնուամենայնիվ, այն հիմնականում հիմնվում է կիրառական հետազոտությունների վրա: Հանձնաժողովը խորհուրդ է տալիս սահմանել հիմնարար հետազոտական քաղաքականությունը՝ հստակ չափանիշների միջոցով: Բացի այդ անհրաժեշտ է Համալսարանի հետազոտական առաջնահերթության չափանիշները ավելի համապատասխանեցնել արտաքին մարմինների կողմից սահմանված չափանիշների, ինչպես օրինակ՝ Գիտությունների ակադեմիայի կողմից: Սա նաև ավելի կարևոր է, որ ՃՇՀԱՀ-ը Հայաստանի համար հանդիսանա որպես համալսարանի մոդել: Մասնավորապես այն պիտի ճանապարհ ցույց տա գիտությունների և տեխնոլոգիաների համալսարաններին, որոնց համար հիմնարար հետազոտությունը ճանաչման ձեռքբերման հիմքում է:

Սովորելու ընթացքում ՃՇՀԱՀ-ի ուսանողները շատ շուտ ներգրավվում են համալսարանում կատարվող հետազոտական աշխատանքների մեջ: Դա նպաստում է ուսուցման և հետազոտության միջև սերտ կապերի ստեղծմանը:

ՃՇՀԱՀ-ի հետազոտական նախագծերը, որոնք հիմանականում կիրառվում են, թույլ են տալիս համալսարանին բնական կերպով զարգացնել արժևորման քաղաքականություն, օրինակ՝ պատենտավորման հայտերի միջոցով: Պետք է նաև նշել համալսարանի կատարած հետազոտության կարևորությունն ու օգտակարությունը՝ Հայաստանի ազգային ճարտարապետական ժառանգության համար:

Համալսարանում կատարվող հետազոտություններն արժևորելու համար փաստաթղթերը հասանելի և կարևոր են, սակայն անհրաժեշտ կլինի ստեղծել մի փաստաթղթային քաղաքականություն, որը կհիմնվի ամբողջական, կազմակերպված փաստաթղթերի ապահովման ծառայության վրա, և որին

միջոցներ կիատկացվեն Համալսարանի շարունակական արդիականացումը երաշխավորելու համար:

ՉԱՓԱՆԻՇ 3. Ուսանողներ

Հղում.

Համալսարանն ուղղորդում է ուսանողներին, լինի դա հավաքագրման, ուսանողների ներգրավվածության, թե ուղեկցման տեսանկյուններից: Հաստատությունը նպաստում է համալսարանական կյանքի բարելավմանը:

Չափանիշի գնահատում

ՃՇՀԱՀ-ում ուսանողների դերը շատ կարևոր է: Ուշագրավ է նրանց ներկայությունն ու ներգրավվածությունը հաստատության բոլոր մակարդակներում՝ ներառյալ որոշում կայացնող մարմիններում ու հակակոռուպցիոն Հանձնաժողովում:

Ուսանողական կյանքն ակտիվ է և ընդգրկում է այնպիսի հետաքրքրության առարկաներ, ինչպես օրինակ՝ մշակութային միջոցառումներ, սանիտարական հսկողություն, կրթաթոշակների տրամադրում, օգնության բաշխում և կառավարում և այլն: Այսպիսով, ուսումնառության ընթացքում, ուսանողի ստացած աջակցությունը համալսարանի կողմից բավարար է:

Բարելավման համար Հանձնաժողովը ՃՇՀԱՀ-ին հորդորում է ընդունելության համար ուսանողների հավաքագրում կազմակերպել Հայաստանի քաղաքներում և գյուղերում՝ որպես ավագ դպրոցում և քոլեջում իր հիանալի նախապատրաստական կրթական ծրագրի լրացում:
Բացի այդ, ցանկալի կլիներ նաև հետևել նախկին ուսանողներին՝ այդ առաքելությամբ զբաղվող հատուկ ծառայության ստեղծման միջոցով և գրանցել նրանց տվյալները Տեղեկատվության համակարգում:
Հանձնաժողովը բարձր է գնահատել Ուսանողական խորհրդի գոյությունն ու հատկապես վերջինիս առաքելությունները:

ՉԱՓԱՆԻՇ 4. Մարդկային, ֆինանսական և նյութական ռեսուրսներ

Հղում.

Կրթության և որակյալ հետազոտության համար համապատասխան միջավայր ապահովելու նպատակով՝ հաստատությունը ցուցաբերում է ֆինանսական կենսունակություն և տրամադրում անհրաժեշտ ֆիզիկական և նյութական ռեսուրսներ: Հաստատության մարդկային ռեսուրսների կառավարումը արտացոլում է որակի իր պահանջները:

Չափանիշի գնահատում

Մարդկային, ֆինանսական և նյութական ռեսուրսները համապատասխանեցված են այն առաքելություններին և նպատակներին, որոնք ՃՇՀԱՀ-ը սահմանել է իր համար: Այսպիսով ուսանողները կարող են իրականացնել իրենց կրթական ծրագրերը բարենպաստ պայմաններում:

Մարդկային ռեսուրսների վերաբերյալ, հատկանշական է աշխատավարձի քաղաքականության առումով գործադրած մեծ ջանքը: Այն դրսևորում է հաստատության կողմից գրավիչ քաղաքականություն վարելու իրական ցանկությունը: Հանձնաժողովը կարևորում է այս կետը՝ հաստատությունից դուրս հավաքագրման հետագա զարգացման համար: Այնուամենայնիվ անհրաժեշտ է սահմանել հավաքագրման գործընթաց Հաստատության ներսում, և հստակ որոշել դրա հետ կապված որոշումների ընդունման գործընթացը:

Դասախոսական կազմի գնահատումը հիմնականում իրականացվում է ուսանողների կողմից: Հանձնաժողովը խստորեն հորդորում է այն համալրել վերադաս մարմինների կողմից իրականացվող տարեկան գնահատմամբ, ինչպիսիք են օրինակ՝ ամբիոնի պատասխանատուները:
Հանձնաժողովը ընդգծում է վարչական և տեխնիկական անձնակազմի վերապատրաստման առումով գործադրված ջանքերը: Այն քաջալերում է ՃՇՀԱՀ-ին դիվերսիֆիկացնել աշխատանքի ընդունված անձնակազմի մասնագիտական ծագումը:

Ողջունելի է նյութական ռեսուրսների վերաբերյալ իրականացվող ՃՇՀԱՀ-ի քաղաքականությունը: Հատկանշական են կամավորական քաղաքականության արդյունք հանդիսացող մեծ ներդրումները, որոնք հաստատությունը արել և շարունակում է անել իր տարածքները վերանորոգելու և ապահով դարձնելու նպատակով: Հանձնաժողովը համարում է, որ այնուամենայնիվ նպատակահարմար կլիներ բարելավել հաշմանդամների համար նախատեսված կառույցները, որպեսզի առավել դյուրացվի նրանց մուտքը տարբեր լսարաններ, լաբորատորիաներ, գրադարաններ և այլն:

Ինչ վերաբերում է Հաստատության ֆինանսական հաշվեկշռին, այն հավասարակշռված է և բավարար: Այնուամենայնիվ, անհրաժեշտ կլինի միջոցներ գտնել, որպեսզի ֆինանսական ռեսուրսներն այդքան կախված չլինեն տարեցտարի տատանվող ուսման վարձի գումարներից: Հանձնաժողովը համարում է, որ Համալսարանի կարգավիճակի փոփոխությունը Հիմնադրամի՝ պետք է նրան հնարավորություն ընձեռի դիվերսիֆիկացնել իր ֆինանսական ռեսուրսները:

ՉԱՓԱՆԻՇ 5. Որակի ներքին ապահովում

<u>Հղում.</u>

Հաստատությունը սահմանում է որակի քաղաքականություն և ապահովում վերջինիս իրականացումը՝ հատկապես հիմնվելով շահագրգիռ կողմերի և տեղեկատվության համապատասխան համակարգի վրա:

Չափանիշի գնահատում

ՃՇՀԱՀ-ը սահմանել է իր որակի ապահովման քաղաքականությունը և դրանում ներգրավում է համալսարանի բոլոր շահագրգիռ կողմերին: Աշխատակազմի ձևավորումը և դիպլոմների հավատարմագրումը ՃՇՀԱՀ-ի ճանաչման կարևորագույն կետերն են:

Այնուամենայնիվ, եթե նույնիսկ գոյություն ունի տեղեկատվության հավաքագրման համակարգ, ՃՇՀԱՀ-ը պետք է ստեղծի մի համակարգ և անձնակազմ, որը կզբաղվի այդ տվյալների վերլուծությամբ և մշակմամբ: Հանձնաժողովը խորհուրդ է տալիս իրականացնել մի գործընթաց, որը կզարգացնի Համալսարանի որակի համակարգը, և դրանում ներգրավել բարձր որակավորում ունեցող անձնակազմի, որը կզբաղվի դրա իրականացմամբ և վերահսկմամբ:

Անհրաժեշտ է, որ հաստատության տեղեկատվական համակարգը (SI) շուտափույթ ստեղծվի: Այն ուղղակիորեն կներգրավի համալսարանի բոլոր շահագրգիռ կողմերին (ներքին և արտաքին) և ժամանակին կտրամադրի տվյալներ՝ իրականացված գործողությունների և արդյունքների վերաբերյալ: Տեղեկատվական համակարգը, որի կենտրոնում գտնվում է ուսանողը, պետք է մարդկային և ֆինանսական ռեսուրսների արդյունավետ կառավարման, ինչպես նաև բոլոր ցուցանիշների արդյունավետ մոնիթորինգի հնարավորություն ընձեռի: Սա մի կարևոր ծառայություն է, ինտերակտիվ գործիք, որի կախքն ունի ՃՇՀԱՀ-ի ղեկավարությունը որակի ապահովման իր քաղաքականության միջնաժամկետ և երկարաժամկետ ղեկավարման (այդ թվում) համար:

ՉԱՓԱՆԻՇ 6. Միջազգային հարաբերություններ

<u>Հղում.</u>

Հաստատությունը զարգացնում է միջազգային գործընկերության ակտիվ քաղաքականություն՝ իր ռազմավարական կողմնորոշումներին համապատասխան:

Չափանիշի գնահատում

ՃՇՀԱՀ-ի ռազմավարությանը համահունչ՝ միջազգային հարաբերությունները հանդիսանում են հաստատության գործունեության հիմնակետը: Իրագործվող քաղաքականությունը շատ ակտիվ է: ՃՇՀԱՀ-ը իր տրամադրության տակ ունի միջազգային հարաբերություններին համապատասխան իր սեփական կառուցվածք: Հանձնաժողովը նշում է, որ հաստատությունը զարգացրել է իր ոլորտում տարբեր կառուցվածքների հետ համաձայնագրերով և պայմանագրերով սահմանված համագործակցություններ, մասնավորապես, Եվրոպայում, Ռուսաստանում և անգամ Միացյալ Նահանգներում: Հարկ է ընդգծել, որ միջազգային ասպարեզում իր ճանաչելիությունը բարձրացնելու նպատակով ՃՇՀԱՀ-ը մշակել է ուսանողների և դասախոսների համար օտար լեզուների անվճար ծրագրեր: Այս կետը կարևոր է: Այդ գործընթացը օպտիմալացնելու նպատակով անհրաժեշտ է, որ

յուրաքանչյուր լեզվով դասավանդվող տարբեր ծրագրերում ՃՇՀԱՀ-ը ներգրավի մասնագիտացված դասախոսներ:

Միջազգային քաղաքականությունը բարելավելու նպատակով՝ Հանձնաժողովը խորհուրդ է տալիս ստեղծել միջազգայնացման ռազմավարության հատուկ վերահսկման համակարգ և միջազգային հարաբերությունների գծով պրոռեկտորի կողմից ապահովել միջազգային գործունեության լիարժեք համակարգում:

ՉԱՓԱՆԻՇ 7. Տեղեկության թափանցիկություն և սոցիալական պատասխանատվություն

Հղում.

Հաստատությունը ջանում է առավել վստահելի և թափանցիկ կերպով հաղորդակից դարձնել իր տարաբնույթ գործողություններին և դրանց արդյունքներին: Համալսարանը նույն կերպ կրում է նաև իր սոցալական պատասխանատվությունը:

Չափանիշի գնահատում

ՃՇՀԱՀ-ն իր առջև խնդիր ունի նույնքան վստահելի կերպով հաղորդակից դարձնել ինչպես կրթության, այնպես էլ հետազոտության իր գործունեություններին:

Իր ուսանողներին և աշխատակազմին, ինչպես նաև հայ ազգի և միջազգային հասարակության ստվար զանգվածին տրամադրվող տեղեկատվության բարելավման պատրաստակամությունը արտահայտվում է մասնավորապես՝ բազմալեզու կայքէջի ստեղծմամբ:

Ավելի լայն առումով, ՃՇՀԱՀ-ը սկսել է բարեփոխել ներքին և արտաքին հաղորդակցման իր համակարգը: Այնուամենայնիվ համալսարանի ռազմավարության մեջ դեռ գոյություն չունի հաղորդակցման ինտեգրված քաղաքականություն: Սա վնաս է պատճառում ՃՇՀԱՀ-ի տեսանելիությանը:

Բացի արդեն գոյություն ունեցող հասարակության հետ կապերի, լրատվության և տպագրության վարչությունից, ՃՇՀԱՀ-ը պետք է զարգացնի հաղորդակցման ինքնուրույն ծառայություն, որը կարող է կրել համալսարանի իմիջը և ամրապնդել հաստատության համբավը: Անհրաժեշտ կլինի նաև, որ հաղորդակցման համար պատասխանատու անձիք սերտ համագործակցեն որակի համակարգի համար պատասխանատու անձանց հետ՝ փոխանցվող տեղեկատվության համապատասխանությունը և վստահելիությունը ապահովելու համար:

Հաղորդակցման իր քաղաքականության մեջ ՃՇՀԱՀ-ը պետք է համոզված լինի, որ ցույց է տալիս, որ իրականացնում է քաղաքականություն, ունի հմտություններ, կարողություններ և արժեքներ, որոնք տարածվում են տեղական հասարակության և խնդիրների շրջանակներից դուրս:

Սոցալական պատասխանատվության առումով Հանձնաժողովը քաջալերում է ՃՇՀԱՀ-ին շարունակել իր ուսանողների և անձնակազմի պաշտպանության համար արդեն իսկ իրականացվող գործողությունները: Հանձնաժողովը արձանագրում է, որ ՃՇՀԱՀ-ն ստեղծել է հակակոռուպցիոն Հանձնաժողով և ուսանողների համար քննությունների արդյունքների բողոքարկման համակարգ, ինչպես նաև, չնայած դա արդեն ընդգծվել է, սակայն հաշվի առնելով այս կետի յուրահատկությունը՝ անհրաժեշտ է դրան նորից անդրադառնալ. այսպիսով, գիտելիքների ստուգման կազմակերպումը հատուկ ուշադրության կենտրոնում է, անհրաժեշտության դեպքում քննություններն անցնում են երեք փուլով: Ավելին, ուսանողների գնահատման գործընթացում ՃՇՀԱՀ-ն իրականացնում է բողոքարկման գործընթաց, որն հնարավորություն է տալիս ուսանողներին ռեկտորատ ներկայացնել բողոքարկման դիում, և ուշագրավ է այն, որ դրա մասին ուսանողներն իրազեկված են: Գիտելիքների գնահատման գործընթացի յուրաքանչյուր փուլում ուսանողները, շատ ակտիվ գործող ուսանողական խորհրդի և հակակոռուպցիոն Հանձնաժողովի միջոցով, վերահսկում են կանոնակարգի կատարումը, ստուգարքների պատշաճ ընթացքը և որոշումների արդար լինելը:

Սա արտացոլում է ՃՇՀԱՀ-ի ամբողջ ներգրավվածությունն այն սոցալական պատասխանատվության մեջ, որ Հաստատությունը կարող է ունենալ իր ուսանողների և անձնակազմի նկատմամբ, և այդ պատասխանատվությունը իրականում կիսում են բոլորը: Այս առումով ՃՇՀԱՀ-ն օրինակ է ծառայում Հայաստանի համար և, եթե չափանիշ 7-ում դիտարկվեին միայն սոցալական պատասխանատվությունը և հակակոռուպցիոն պայքարը, Հանձնաժողովը լիովին բավարարված կլիներ:

ԱՄՓՈՓԻՉ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Հաշվի առնելով հավատարմագրման բոլոր չափանիշները՝ հավատարմագրման Հանձնաժողովը ներկայացնում է հավատարմագրման սույն զեկույցը, որի ընդհանուր գնահատականը **դրական է՝ 5 տարի ժամկետով պարտադիր դիտարկման պայմանով**:
Այսպիսով ՃՇՀԱՀ-ը հավատարմագրվում է հինգ տարի ժամկետով, որի ընթացքում համալսարանը պետք է ANECA-ին և HCERES-ին ներկայացնի գործողությունների ծրագիր, որտեղ նկարագրված կլինեն այն քայլերը, որոնք վերջինս նախատեսում է ձեռնարկել սույն զեկույցում շարադրված առաջարկներին հետևելու նպատակով: Նշված գործողությունների ծրագիրը կհանդիսանա այդպիսով դիտարկման առարկա, որին հաստատությունը պարտավորվում է արձագանքել: Չնայած նշված դիտարկումը չի սահմանափակում կամ բացառում ցանկացած այլ գործողություն, այն մասնավորապես ներառում է գնահատման Հանձնաժողովի երկու անդամների այցելությունը հաստատություն՝ հավատարմագրման որոշումից մոտ 30 ամիս անց, որոնք բարեհաջող անցկացրել էին առաջին այցը: Այդ Հանձնաժողովը կկազմի զեկույց, որտեղ կգնահատվեն գործողությունների ծրագրի մեջ նախատեսված, կամ դրա համաձայն իրականացված գործողությունները: Այդ զեկույցը, հաստատության վերջնական մեկնաբանությունները ստանալուց հետո, կհրապարակվի Գործակալությունների կողմից:
Գործակալությունները պետք է վեց ամիս ժամկետում ստանան ՃՇՀԱՀ-ի կողմից ակնկալվող գործողությունների ծրագիրը, որը միտված է պատասխանել սահմանված առաջարկներին և պարունակում է հետագայում գնահատման առարկա հանդիսացող նախատեսված գործողությունների մանրամասն նկարագրումը:

Հավատարմագրման Հանձնաժողովի հիմնական առաջարկները հետևյալն են.

Կառավարման վերաբերյալ.
- Հոգաբարձուների հայաստանյան իշխանությունների հետ մեկտեղ ներգրավվել համալսարանի որոշում կայացնող մարմինների, մասնավորապես՝ հոգաբարձուների խորհրդի կազմի փոփոխության գործընթացում՝ նպատակ ունենալով պետության հանդեպ ինքնավարության աճը:

Տեղեկատվական համակարգի վերաբերյալ.
- Ստեղծել Հաստատության ինտեգրված տեղեկատվական համակարգ (SI)՝ նպատակ ունենալով համալսարանի պատասխանատու անձանց տրամադրել կարևոր տեղեկատվություն՝արդյունավետ ղեկավարման համար (Էլեկտրոնային ինտերակտիվ էկրան, ուսանողների և անձնակազմի կառավարում, աշխատանքի ընդունում, գենդերային հավասարություն տղամարդ-կին, հաստատության միջազգային կապեր, հետազոտության ոլորտում բարձր վարպետություն և այլն) և համալսարանի ներքին և արտաքին այլ շահառուներին տրամադրել տեղեկատվություն իրականացված գործողությունների և ցուցանիշների մոնիթորինգի արդյունքների վերաբերյալ: Այդ նպատակով Հանձնաժողովը խորհուրդ է տալիս սերտ համագործակցել համապատասխան Եվրոպական Համալսարանների հետ՝ վերջիններիս փորձից օգտվելու նպատակով:

Որակի երաշխիքի վերաբերյալ.
- Ստեղծել տվյալների և ցուցանիշների վերլուծության և մշակման համակարգ, սահմանել համապատասխան ղեկավարմանն ուղղված գործողություններ:
- Մշակել գործընթաց, որը կնպաստի համալսարանի որակի համակարգի զարգացմանը, և այդ գործընթացում ներգրավել բարձր որակավորում ունեցող անձնակազմ, որը պատասխանատու կլինի դրա իրականացման և մոնիթորինգի համար:

Հաստատության հաղորդակցման քաղաքականության և հանրային տեղեկատվության վերաբերյալ.
- Հաստատությունում սահմանել հաղորդակցման քաղաքականություն, որը կերաշխավորի տրամադրված տեղեկատվության համապատասխանությունը և վստահելիությունը և համահունչ կլինի համալսարանի ռազմավարությանը:
- Հիմնել այդ քաղաքականության զարգացման համար պատասխանատու հաղորդակցության մի ստորաբաժանում կամ ծառայություն, որը պետք է կրի Հաստատության իմիջը և այն տեղեկատվությունը, որը հաստատությունը ցանկանում է հաղորդել:

Հետազոտությունների և բարձրագույն կրթության գնահատման
բարձրագույն խորհուրդ

Որակի գնահատման և հավատարմագրման
ազգային գործակալության համար և
Հավատարմագրման Հանձնաժողովի անունից

Միգել Անխել Գալինդո Մարտին
Տնօրեն ստորագրություն
Որակի գնահատման և հավատարմագրման
ազգային գործակալության ԿՆԻՔ

Ձեկույցի տրման օրը և վայրը՝ Մադրիդ, 29 սեպտեմբերի 2015թ.

01 դեկտեմբերի 2016թ .Ես՝ Վարդուշ Ռուբենի Խաչիկյան , արտոնագրված թարգմանիչս (արտոնագիր թիվ 76, տրված 12.06.2003թ. ՀՀ ԱՆ կողմից), հաստատում եմ ֆրանսերենից հայերեն լեզվով տվյալ թարգմանության ճշտությունը : Պաճենը ճիշտ է բնօրինակի հետ:

Թարգմանիչ՝ Վ. Խաչիկյան

Թարգմանիչ
Переводчик
Translator